

տեղ՝ տողին վերջը՝ կը գտնենք *σάτρα* (սա-
արա) բառը՝ թարգմանուած մեծ արքային
(էջ. 332), յորմէ կը ծագի նաեւ սատրա-
պա (satrapa) բառն, որ Արիստոսելի ըն-
ծայուած Յաղագս աշխարհի գործոյն մէջ
(Գլ. 2,) կը մեկնուի գերի մեծի արքային
(էջ 332):

Լա Կրող չի տարակուսիր Հայոց միաբը-
նակ լինելուն վրայ, և ազատ համարձակ ի-
րենց քրիստոնեայ անունը կու տայ. բայց
նոյնը « չեմ համարձակիր, կ'ըսէ, ընելու
Սպանիացոց և Լուսիտանացոց համար¹ ».
(էջ. 356): Ով որ այդ բանին պատճառները
չուտով չըմբռնէ, թող նորա գրքին մէջ ու-
րոնէ:

Ե. ՏԵՁԱ.

բան առ բան թարգմանելով. « Կ'առաքէ զիս Քսերքէս,
ով եղեռնաւորը բնաւին »: Ամբողջ հնդկերէն է, բաց
ի թաղաւորի անունէն. և այս անունն պակասութիւն
կ'առաջնորդէ մեզ առ հին պարսկերէն *Khsayârsâ*.
Շարունակելով բառախաղը կարելի է կարգաւ *xiçunam*,
« Քսերքէս զիս կ'ուղարկէ՝ արգարեւ ոչ շար քոմ »,
այսինքն՝ ապահով եղէք որ վստահանալի անձ մի եմ:
Այսպէս ահա Լա Կրող պիտի տեսնէ որ իւր *σάτρα*,
որոյ վրայ վստահացեր էր՝ զողացուեր է:

1. Je n'oserais dire la même chose des Espa-
gnols et des Portugais. (p. 356). պատճառն այն
է՝ որ յիշեալ ազգերը կաթոլիկէ անուան ներքէ՝ նոր-
ադանդ Լա Կրողի կրօնական համոզմանց արամազծա-
պէս հակառակ համոզմունք ունէին:



ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆՔ

Ե Ղ Բ Ե Ե Բ Վ Ե Գ Ա Յ

(Շար. տես. Հատ. ԾԴ, յէջ 330)

Դ

ԵՂԻՇԷ ՈՒՆԷ՛Ր ՕՏԱՐ ԱՂԲԻՒՐ



ԵՐ օրերը քննադատական աւ-
արարէնքն ընտրողաց համար հետեւ-
ելի նորաձեւութեանց առաջինն է՝
նախ խել առնուլ քննելի գործն այն
անձին ձեռքէն, ում կ'ընծայուէր, և
ապա դատաւիտեւ զայն: Այդպէս ի
հրապարակ եկաւ Տէրպօղոսեան ի սկզբան՝
« Եղիշէի պատմութեան աղբիւրն » անուն
յօդուածովն*:

Նա գտեր էր « հիմքեր », որոց համեմատ
« սխալ է՝ Եղիշէի Վարդանանց պատմու-
թիւնը 451 թուի պատերազմին մասնակցող
անձին, Եղիշէին վերագրելու: Նրա հեղի-
նակը ուշ ժամանակի պատմիչ է, և իւր
ձեռքն ունեցել է գրաւոր աղբիւր, որից
օգտուել է**»: Իսկ ի մեզ այդ « հիմքերն »
յառաջ բերած էին այս համոզումն, թէ ինքն
Եղիշէն է իւր աղբիւր՝ գէթ այն մասանց
մէջ՝ որոց վերայ խնդիր կը հանէր քննա-
դատը: Աղոնք էին, առաջին՝ Եղիշէի և Ղա-
զարայ երկրորդ դրուագի նախարարական
ցանկերը. երկրորդ՝ ի Բիւզանդիոն յղուած
պատգամաւորութիւնը. և երրորդ՝ աղուանից
ուղարկուած օգնութիւնը:

Թէ արդեօք յանուն Եղիշէի մեզ հասած

* Հանդէս առն. 1893, Թիւ 1, 2, 4:

** Նոյնը հաստատեց և Հանդիսի խմբագիրը ծանո-
թութեամբ մի, խոստանալով ուրիշ անգամ ապացու-
ցանել զայն: Բայց քննադատն իւր դիւտէն այս տարի
ուծացած կը թուի, (այս պատճառաւ յետաձգեցինք
մենք ասոր պատասխանն, իբրեւ այլ եւս երկրորդա-
կան խնդիր քննադատին համար), թէ եւ չէ բողոքովին
հրաժարած. նոր քննադատութեան մէջ դեռ կը գրէ.
« Եղիշէ, ով որ էլ լինի այդ անուան տակ ծածկուած ».
կամ « Եղիշէի պատմութեան հեղինակը »: